ձանօք խնդրէր զայնս, և ընդ գրոյն առաքեաց զմահտեսի Յակոբ հաւատարիմն իւր բերել զնոսա յԵրուսաղէմ, եւ նոքա յանձն արարեալ առաքեցին։

Յովհաննէս Պատրիարք նախ քան զվախճանիլ իւր պատուիրեալ էր աշակերտին իւրոյ առաքել յԵրուսաղէմ զեպիսկոպոսական զգեստ պատարագին. լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի՝ շնորհեաց զայն Յակոբ վարդապետի, իբր արժանաւոր ժառանգ պատուոյ հոդեւոր հօր իւրոյ, այլ նորա ոչ ընկալեալ զայն՝ փութաց կատարել զկտակ հանգուցելոյն, առաքելով ընդ Սեղբոս Ամիրայի, որ եկն յուխտ յԵրուսաղէմ որդւովք և ընտանեօք, և յանձն արար 'ի ձեռս Գրիգորի Պատրիարքի (1741. 'ի 18 Յուլիսի)։ Որք են այսոքիկ՝ 1 թագ եպիսկոպոսական սաղնեգործ մարգարտով և պատուական ակամբք. 2 եմիփորոն գործ սաղանի. 3 կոնքեռ. 8 փէչ տիպայ շուրջառ մին անկար. 12 գեղեցիկ շապիկ. 1 կորփուբայ. 1 արծաթի սկիհ. 1 մասնատուփ. 3 արծաթի հաղորդի աման. 1 մինէլի արծաթ գօտի. 3 գաւազան. 2 սկհի ծածկոց Ֆրէնք փէսկնդ. 1 շղարշ. 1 զոյգ սաղնագործ հողաթափ. 1 փորուբար. 1 զոյգ բազպան. 1 Աւետարան մագաղաթ ոսկեատուփ գոհարակնեայ. 1 Աւետարան փոքր մագաղաթ ոսկեատուփ. 2 զոյգ արծաթ բուբանոց՝ և վարդի ջրաման. 3 արծաթ թաս. 4 թէլաթին մաթարայ ոսկեթել. 1 ջուխայ գորգ. 1 մինելի արծաթ Խաչելութեան պատկեր երեք փեղկեան. 1 տպանոս գաւազան՝ բոլոր գլուխն ոսկով և պատուական ակամբք։

Ի սոյն աւուրս Արաբացի աւազակք հասեալ 'ի գիշերի պատեցին զվանս Ս. Փրկչի, և կործանեցին զորմն հիւսիսային յարեւելից յարեւմուտս. Աթոռակալ Գաբրիէլ վարդապետն և Պօղոս թարգմանն ազգ արարին գատաւորին, և նա գրեաց առ ճարտարապետ քաղաքին, և ապա ելին բազմութեամբ այլազգեաց 'ի քննութիւն, և չափեալ ըզկործանեալ տեղին՝ գտին 8 կանգուն յերկայն՝ և բարձրութիւն կանգուն 6. և զորմն արեւելեան խախտեալ կանգուն 5։ Ապա հրամանաւ գատաւորին և քաղաքապետին շինեցին Հայք զկործանեալ տեղիսն, և խցին զծակոտիս պարսպին՝ զի աւազակք զետեղէին 'ի նոսա զմատունս ոտից իւրեանց և կռուեալ ելանէին 'ի վեր. շինեցին նաեւ